ցին, որպէս մեծարեալ պատուէրին զնա արդիքն Իսրայէլի, եւ ոչ շինեցին եկեղեցի 'ի վերայ նորա, ըստ բանի Տեառն. «Ահա թողեալ լիցին ձեզ տունդ ձեր աւերակ, և թէ ոչ մնասցէ այդր քար 'ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի»։ Եւ Սոփրոնիոս աւետալ զձեռանէ Օմարայ կացոյց զնա 'ի վերայ աղբիւսին, եւ նորա առեալ քուրձ ելից 'ի հողոյ եւ թափեաց 'ի ճորն Գեհոնի. եւ հայեցեալ այլազգեաց յիշխանն իւրեանց՝ ամասարեցին եւ նոքա բառնալ զհողն այր իւրաքանչիւր յուս իւր, 'ի հանդերձս և 'ի վահանս և 'ի զամբիւղս, մինչեւ մաքրեցին զտեղին զայն, եւ յայտնեցաւ վէմն, որ կոչի Սախրայ, և ասացին ոմանք թէ շինեսցուք մզկիթ և արասցուք ըզվէմն 'ի Գոլգ, եւ ասէ Օմար ոչ, այլ շինեսցուք մզկիթ և արասցուք զվէմն 'ի վերջն մզկիթին։ Յետ այնորիկ չոքաւ Օմար 'ի Բեթղեհէմ տեսանել զնա, և եկաց յաղօթս 'ի ներքս եկեղեցւոյն, և գրեաց յետկար և ետ ցՊատրիարգն, թէ ոչ ոք 'ի Տաճկաց յայսմ տեղւոջ կացցէ յաղօթըս, բայց եթէ այր զկնի առն, և ոչ ժողովեսցեն ասատանօր համախումբ յաղօթս, և մի' կարդասցեն էջն 'ի սմա, եւ մի' այլայլեսցեն զիրս ինչ 'ի շինուածոյ սորին։ Բայց այլազգիքն որք եկին զկնի Օմարայ, զհակառակն յետկարի նորին գործեցին ըստ հաճոյից իւրեանց 'ի Բեթղեհէմ, քանզի կորզեցին զմիւսիոնն, եւ գրեցին 'ի նմա զոր ինչ և կամեցան, և էջն կարդացին։

Տուեալ է Օմար եւ դաշնագիրս կրօնաւորացն Հայոց եղելոց յԵրուսաղէմ 'ի ժամանակին յայնմիկ 'ի \0 թուականի Հիճրէթին (636), յորում ասանէ յանուանէ հաստատէ զամենայն վանօրայս Հայոց, թէ 'ի ներքս 'ի քաղաքին և թէ արտաքոյ նորին, մինչեւ 'ի Սամարիա, ուր էր վանք Հայոց, և զբաժին ժառանգութեան Ս. Տեղեաց, զԳողգոթա տեղի Խաչելութեանն 'ի Տաճարին Ս. Յարութեան, զորոյ զթարգմանութիւնն թողումք ընթեռնուլ 'ի դաշնագիրս Մէլիք Սալահատտինի։

Այսպէս Խալիֆայն Օմար երկրորդ յաջորդն Մահմեթի, տիրեաց Երուսաղէմի. նոյնպէս Պաղեստին եւ Եգիպտոս մտին ընդ լծով ծառայութեան Յաղթողին։ Կրօնաւորքն Հայոց Երուսաղէմի թէպէտեւ զերծան առ ժամն 'ի կրօ-